

ADMINISTRATION
Place des Canons, 9, Rue d'Italie
REYROUTH «Liban»
DIRECTEUR-PROPRIÉTAIRE
J. ADJEMIAN

Ազգային - Քաղաքական - Գրական
ԱՆԿԱԽ - ԿԱՅՑԱԹԵՐԹ

Է. ՏԱՐԻ Թիւ—587

ՉՈՐԵՔԱԲԹԻ 26 ՕԳՈՍՏՈՍ 1931

ՀԱՏԸ 3 Ս. Գ.

Բ Ա Ժ Ն Ե Գ Ի Ն			
ՍՈՒԲՈՒՆ	ՏՐԵՄ	ՎԵՐԱՄԱՍ	ՇՆԱՄԱՍ
350	175	125	
ԱՐՏԱՍՏԱՅՄԱՆ	6	4	2 ՏՅՈՒՄ
Խմբ. Մ. ԱՂԱՋԱՐԵԱՆ			

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ե Ա Ն Ա Ռ Ա Ջ

Բ.

Հին ճամբան է, երբ վեհ. Բաբելոն կաթողիկոս կը բռնէ սա համար ժողովուրդի ականջէն, և զայն ծունկի կը բերէ կարգ մը շփացած թայֆաներու առաջ. և այդ՝ պարզապէս զիջողութեան համար. զիջողութեան ճամբով համեմատելով զանոնց յայտով:

Եւ սա, քառասուն տարիներու փորձառութիւնն է. փորձուած, վերափորձուած, և քառասուն հազար անգամ կրկնափորձուած զրուիւն՝ որուն համար ալ կաթիլ մը մելան և կտոր մը թուղթ իսկ պիտի չուզէինք սպասել. միայն կուզէինք ըսել և շեշտել, թէ վեհ. Բաբելոն կաթողիկոսին առաջին օրէն ցուցադրած նորոգութիւնը շոշափելի բան մը չեղաւ իսկ գործը՝ չառաջնորդող հոն՝ ուր որ կուզէինք երթալ վարդապոյն երազներով:

Սուրբոյ թեմական կազմակերպութեան հարցը կայ մէջտեղ զրուած. լուռ իրարանցում կը տրի, ներքին ձեռքեր անդադար կը սակարկեն կուսակցութիւններու հետ. այն կուսակցութիւններու հետ՝ որոնց ետեւէն օրը քառասուն նալէք կը կարգան: Ինչո՞ւ է այս հակասութիւնը՝ որովհետեւ անոնք կուրի, ծծի, սարսափը կազդեն և արեւմտ կ'սպասունան... և ո՞վ որ աւելի կ'սպասնայ՝ շատ աւելի իրաւունք կ'ստանայ:

Այս այս հոգեբանութեամբ կը լեթուի ժողովուրդը. այս բանը մտայնութիւն կը դառնայ հայ երիտասարդին մէջ, այսպէս կը յաւերժանայ թայֆայականութիւնը և կ'ըլլանք խուժան:

Հոս է վտանգը, և հարկ չկայ ըսելու թէ պատմութեան առաջ ուրեք են պատասխանատուները:

Առաջին օրէն շատ պարզ խօսեցանք. ըսինք որ ընեն ինչ որ կուզեն. բայց միայն քաղաքականութիւն չխաղայն այս ցաւատան ժողովուրդի գլխուն:

Այս ժողովուրդը երկու հայրենիք ունի. մին հոն՝ ուր կապրի, միւսը հոն՝ ուր կը նայի. ուրեմն պէտք է որ այս երկու հայրենիքներուն հետ իր կապերը ըլլան համակրական:

Դաշնակցութիւնը մեր կամքէն և ցանկութիւններէն անկախ կերպով օչ ցանկալի և անվտանգելի տարր մը եղած է Սուրբոյ տեղական ժողովուրդին և Հայաստանի մայր հողին: Այս մեր մեղքը չէ՝ որ պիտի քաշէինք, կամ պիտի կրնայինք խախտած հիմերը իրենց տեղը բերել՝ քանի որ դեռ դաշնակցութիւնը ինք չէ գիտակցած այդ բանին և օրէ օր նոր արշաւներ կընէ դէպի անկում, դէպի խախտում:

Իրերու այս դրութեան մէջ երբ Սուրբոյ թեմական կազմակերպութեան ձեռք կը նետուի, դուրսիւր մաշ կը պարտադրէ, որ չըլճայեցաք ըլլանք և չվտանգենք այս ժողովուրդին ներկան և ապագան:

Սուրբահայ թեմական կազմակերպութեան մէջ դաշնակցութեան ցայտուն երեւումը բացայայտօրէն պիտի վտանգէ այս ժողովուրդին շերտը Սուրբոյ մէջ թէ Հայաստանի առաջ, և կորսնցնող մշտապէս պիտի ըլլայ ժողովուրդը, մերկ հայութիւնը:

Եթէ կցենք բացատրուել, ուրեմն և կրնանք հասկցուել, թէ ինչու հայութիւնը ընտրութեան մէջ պէտք է բռնէ հակադաշնակցական դիրք՝ առանց երբեք կուսակցական նախախրութիւն չունենալու: Եւ եթէ դաշնակցութիւնը ինքն ալ պահուած կաթիլ մը խիղճ ունի և ազգասիրութիւնը ըստ իր բան մը կը կրէ, կամովին մի քիչ հեռու պիտի քաշուէր ազգային գործերէ, ցուցամուտութեան փոթորիկէն չտարու համար սա աւազի վրայ նստած հայութիւնը:

Բայց մեր վեհապետները այդպէս չխորհեցան, այդպէս չեն խորհիւր եւ չենք գիտեր թէ ինչպէս կը խորհին՝ երբ իրենց իսկ կը թնայ սահմանադրական օրէնքի տրամադրութիւններուն հակառակ, կը հրահանգեն իրենց փոխանորդները:

«Եթէ ազգային տուրք պահաւոր կ'ըլլայ, զանց ըրէ՛ գայն այս անգամուան համար»:

Կարելի է ի հանձն առնող դաշնակներու այս անգամ զանց ընել ազգային տուրքը, ուրիշ անգամ մը ընտրութեան եղանակը, և այդպէս շարունակաբար և սակայն չենք վրայէն գացող մէն մի քարին համար պատմութեան առաջ պատասխանատու են իրենք՝ վեհ. կաթողիկոսները, որոնք ուսում տան են պահել, պաշտպանել և գործադրել հայ եկեղեցական ուսանման պրական օրէնքները:

Եթէ իրենք է, որ կ'սկսին իրենց բնական տան քարերը միառմի վար առնել՝ ալ վայ է եկեր այդ չենք ինչ ուր գաղաններ պիտի որջանան եւ բուրբ պիտի վայեն:

Եթէ իրենք է, որ կային կը դնեն իրենց՝ կանգնած ճիւղին վրայ՝ ալ վայ է եկեր իրենց՝ որովհետեւ անկումը անխուսափելի է եւ մահը վճռական:

Եթէ իրենք է, որ կուզեն կեանք, կենդանութիւն տալ կիլիկիոյ ութն դարեայ ժողովուրդին՝ պէտք է որ նոր ընթիւղ մը ծիլի, և այդ ընթիւղը լաւագոյնս պաշտպանուի արտաքին խորհակներէ:

...Եթէ կուզեն:

Մ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՋԸ ԲԱՐԻՋ ԿՈՒԳԱՅ

Բարիգէն դիմում արժանանալու նամակ մը կը տեղեկանամք թէ Հայաստանի նախագահը Սահակ Տ. Դաբիշեան այժմ Պերլին կը գտնուի եւ ի մօտ Բարիճ կ'ապաստուի: Նամակը կ'աւելցուի թէ նախագահը մասնաւոր հետաքրքրութիւն պիտի ունենայ ներգաղթի հարցով:

ԼԻԲԱՆԱՆՑԻ ՄԵԾՈՒԹԻՒՆ ԳՐՈՂԸ



Հ Ի Պ Ր Ա Ն Խ Ա Լ Ի Լ Հ Ի Պ Ր Ա Ն

ԼԻԲԱՆԱՆԻ ՄԵԾՈՒԹԻՒՆԸ

Հիպրամ խալիլ Հիպրամի անդամներուն փոխադրութեան համազգային սգանադիւնին առթիւ

Միջերկրայ մեծ կապոյտին ժպտուն ծոցին ափնածիր՝ Շողուն մի շար կը կազմեն բլրիկները, ո՞վ Լիբանան, եւ մինչ ոտներդ կը լիզեն բլուր շրջաններ փրփրալիլ՝ Օղակ օղակ բարձունքներդ երկնի ուղին կը բանան:

Դեռ հրանուկներդ կը պատմեն Աշունխէն, Աստղիկէն... Վաճառաբարձ նաւերով՝ մինչեւ հիւսիս ու հարաւ, Մինչ Հերակլի Կոթորիկէ՝ Տիւրքոս համաբարձ տարաւ... Երբ Փիւնիկէն կը փայլէր՝ դեռ ո՞ր էր վէս Աստղիկէն:

Աւերակներդ են օրհնալ, օրհնալ եւ սուրբ է քու հող. Հոն խաչակիրք քաշեցին, մէն մի կատարդ է խորան... Թէպէտ ատեն մը քու հին փառքդ ու պերճանքդ կորան:

Հոգիդ ազատ մընաց միշտ՝ մայրիկներդդ պէս յաղթող... Այսօր դուն մեծ ես նորէն... ահա՛ մէկ փաստն անվարան. Գուրդիկներդ մեծարել գիտեն հանձարն ու քերթող:

— Ուրիշ մեծուց քեզ այնքան՝ որքան մեծ սուրբ այսօրուան:

Մ. ՏԱՄԱՏԱՆ

Հիպրամ եւ իր Հայրենիք

Ո՞վ է Հիպրամ. — Աղքատ ընտանիքի զաւակ. Մեծ է 1883-ին, հիւսիսային Լիբանանի Պըշարի գիւղը: Փոքր հասակէն յանձնուած է կրօնական դաստիարակութեան, ապա զրկուած է քրիստոս, ուր ստացած է իր հիմնական ուսումը:

Հիպրամն ապա կանցնի Ամրի-կա, հոն կը կատարելագործէ իր սիրած արուեստը՝ գծագրութիւնը, և կը տիրանայ անգլերէն լեզուին, որով գրած է իր գործերուն մեծ մասը:

Հիպրամի դրական համարը միջազգային է. անոր կորուստը օղբաց միջազգային մամուլը և որքան Լիբանանցիներն նոյնքան Ամրի-կացիներ կը սգայ: Հիպրամ Լիբանանցի մեծագոյն գրողն է. ան գրած է փիլիսոփայական խոհերով, վառ եւ բեւապայութեամբ և խոր վերլուծութիւններով. արտաքրած է 25

տարիներ շարունակ՝ մանամեծ քանակութեամբ: Իր գլուխ գործոցը՝ «ՄԱՐԳԱՐԻՆ», տպագրուած է 72-000 օրինակ, և սպասուած ամբողջութեամբ: Այս գործը թարգմանուած է 22 լեզուներու:

Հիպրամ, որքան անուանի գրող մը նոյնքան համաբաւար գծագրիչ մը եղած է: Իր գործերը չափազանց թանկարժէք եղած են և միշտ արժանաւորութեան մէտայնութիւնը շահած է միջազգային ցուցահանդէսներու մէջ:

Հիպրամ իր գրեզնի ու լրճիւղը ոչ միայն միջազգային անուն մը չիւնած է, և պատիւ մը իր հայրենիքին՝ այլ և 50,000 սթրլինգի հարստութիւն մը կը թողու իր հայրենի գիւղին: Ընտանեկան ոչ մէկ մօտիկ պարագայ ունի, բացի իր մէկ ջոյնը, երբ մահերիւայէն կ'ընկերանայ իր եղբոր մարմինին՝ ըստ կա-

կի գործադրելու համար անոր ցանկութիւնները: Հիպրամ 27 տարիներ շարունակ Միացեալ Նահանգները ապրած է առանց Ամերիկեան քաղաքացի դառնալու և իր Լիբանանի քաղաքացիութիւնը կորսնցնելու:

Հիպրամ ուրեմն, եթէ անուանի գրող մըն է, համաբաւար գծագրիչ մը՝ անշուշտ և ճշմարիտ հայրենասէր մըն է, որ մահուան առաջ միակ ցանկութիւն ունեցած է երթալ յաւիտենապէս հանգիլի իր հայրենիքին, իր հայրենի գիւղին մէջ, իր ոսկորներուն հետ՝ զիպէս հարստութիւնն ալ նուիրելով անոր:

Ահա թէ ինչու ամբողջ Լիբանանը առանց գաւառական և այլ խտրականութեան, ազալ անոր մեծ կորուստը և արժանաւայելի օրէն յարգեց ու պանծացուց անոր խնկելի յիշատակը:

ՅՈՒՆԱՐԱՅԻՆՈՐՈՒԹԻՒՆԸ. — Մեծանուն գրող մօտ շորտ մահուան առաջ ինչ եօթի մէջ մեռած էր կուրծքի հիւսնադութեան և քրտնախտով, մարմինը փոխադրուեցաւ Լիբանան:

Մասնաւոր յանձնախումբ մը, շարքիներ առաջ ընդունելութեան նախապատրաստութիւններ տեսած էր և հրաւիրագրեր դրած Լիբանանի բոլոր համայնքներուն, միւս թիւներուն և կազմակերպութիւններուն:

Հիպրամին մարմինը Պէյրութ հասաւ անցեալ 21 Օգոստոս, ուրախօրը Պէյրութ արժանաւայելիօրէն ընդունեց զայն և կրան Թէաթրի մէջ սարքուած սգահանդէսով մը պանծացուց անոր յիշատակը:

22 Օգոստոս, Շաբաթ առտու ժամը 7-ին մարմինը մեծ թափօրով փոխադրուեցաւ հանգիստեալին հայրենի դիւղը՝ Պըշարի:

Հիւսիսային Լիբանանի ամբողջ բնակչութիւնը, Պէյրութէն մինչեւ Պըշարի, 15 ջիւղմէթ ճամբու երկայնքին վրայ խուռներամ տողանցք մը կազմած էր: Անթիլիաս, Անթուրա, Ճոնի, Մամիթէյն, Հիպիլ, Բաթրուն, Թրիփօրի, Ամրուն, Գիւսպա, Հասէտ ձգպէս և Հաւրուն

— Կատակերգութիւնը վերջացաւ... բաւական
է որչափ որ ինքդինքո մեռեալ ձեւացօցի:
Արմեն Տէրօյ յարութիւն կ'առնէր:

Եգիպտոս . Թուրքի Ոսկի	634.50
Անգլիական »	618.50
Պաղեստինեան »	618.50
Թրքական »	59.75
Ամերիկեան Տօլար	127.10
Իտալական Լիր (100)	665.—
Յուգոսլական Տրախմի (100)	160.—
Պանք Օթթօման	150.—
Անգլիական Ոսկի Հնչ .	618.—
Օսմանեան »	553.—
Ֆրանսական »	480.—
Մէքսիկո Արժանք	32.—